# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ ____________________

« _____» _______________ 2025 թ.

*Հասմիկ Ռաֆայելյանին*
*/Հասցե՝ ԵՐԵՎԱՆ, , ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ,*
*Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ 2 Փ., 11ա, 6 /,*
*/էլ. փոստ՝ hasmikrafayelyan@gmail.com /*
**Պատճենը՝ ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և**

**ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ**

Տիկին Ռաֆայելյան

*Ի պատասխան 11.06.2025թ. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին ուղղված Ձեր դիմումի և ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 12.06.2025թ. թիվ ԴԽ//19952-2025 հանձնարարականի*

ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի ասֆալտապատման հնարավորությունը դիտարկելու նպատակով գրություն է ուղարկվել Սպիտակի համայնքապետարան:

Կից ներկայացվում է Սպիտակ համայնքի ղեկավարի պատասխան գրության պատճենը:

Առդիր՝ 1 ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Invalid signature

X

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

կատ. Վ.Դանիելյան
հեռ. /0322/ 2-35-99

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

«18» հունիսի 2025թ. № **034/ 02 -** 1926

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավետիսյան.

Ի պատասխան Ձեր 2025 թվականի հունիսի 17-ի թիվ 01/108,4,2/05258-2025 գրության, հայտնում եմ, որ Սպիտակ խոշորացված համայնքը իր մեջ ներառում է քսան գյուղական և մեկ քաղաքային բնակավայր: 2021 թվականից ի վեր, համայնքների խոշորացումից հետո, մեր համայնքում 2022-2023 թվականներին տուֆով հիմնանորոգվել է 9 028 գծամետր, ասֆալտապատվել է 2 315 գծամետր ճանապարհ, այժմ՝ 2024-2025 թվականներին տուֆով հիմանորոգվում է 22 185 գծամետր, ասֆալտապատվում է 8 521 գծամետր ճանապարհ:

Սպիտակ քաղաքում կան բազմաթիվ հիմնանորոգման կարիք ունեցող փողոցներ, որոնք տարբեր աստիճանի լուծում պահանջող խնդիրներ են՝ հրատապ (մասնավորապես գրունտային ճանապարհներ), կարևոր և պլանային: Համայնքը, առաջնորդվելով այս գնահատմամբ և ելնելով ընթացիկ իրադրությունից, գնահատելով կարևորությունը, առաջնահերթություն է տալիս հրատապ և կենսական նշանակություն ունեցող փողոցների հիմնանորոգմանը: Այդուհանդերձ, անմասն չի մնում նաև դիմումով ներկայացված Շահումյան փողոցի այդ հատվածը, որի բարեկարգման անհրաժեշտությունը ևս գտնվում է համայնքի ուշադրության կենտրոնում: Միաժամանակ հայտնում եմ, որ վերոնշյալ փողոցում ներկա պահին կատարվում է ջրագծի հիմնանորոգման աշխատանքներ:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Կատարող՝ Է. Չոքանյան
Հեռ.՝ 0255-2-25-00